



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 մայիսի 2018 թվականի N 620

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ «ԵՐԿԻՐ ԾԻՐԱՆԻ» ԿՈՒՍԱԿԳՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՇՏԱՊ ՀԱՎԱՔ ԵՎ ԵՐԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երկիր Ծիրանի» կուսակցության անդամ Մարինա Խաչատրյանի կողմից ներկայացրած իրազեկումը, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ա.Ղազարյանի հանրային շտապ հավաքի անցկացման վերաբերյալ բանավոր դրական կարծիքը, ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 20-22-րդ հոդվածներով, 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ **որոշում եմ.**

1. «Երկիր Ծիրանի» կուսակցության կողմից 2018 թվականի մայիսի 02-ին ժամը 17:00-ից մինչև 23:00-ն ընկած ժամանակահատվածում, Վանաձոր քաղաքի Արցախ պուրակում հանրային շտապ հավաքի և երթի անցկացման վերաբերյալ իրազեկումն ընդունելի գիտություն:
2. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին համայնքի ղեկավարի որոշման մասին անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև համապատասխան որոշումը փակցնել համայնքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի և տեսանելի տեղում: Որոշումը տեղադրել նաև vanadzor.am համացանցային կայք էջում:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝ Մ.ԱՍԼԱՆՅԱՆ

Ճիշդ է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա.ՕՀԱՆՅԱՆ